ՀՆԱԳՈՒՅՆ ԱԶԳԵՐԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԷՋԵՐԸ

Առաջադրանքներ

1. Տրված բառաշարքից դո՛ւրս գրիր նորաբանությունները:

Ձեպահարցում, լուսավոր, կածան, գեղջուկ, ուսպր, ապագա, առավոտ, տեսանյութ, ընտրատեղամաս, եվրոբանկ, հայրեն, դրացի, արտույտ, լրատվամիջոց, ավետաբեր, խաղահանդես:

2. Բառաշարքից դո՛ւրս գրիր գրքային բառերը:

Եղյամել, ցնծություն, արևահամ, ողբանվագ, լացակումած, արնանման, անվեհեր, լուսնաթռիչք, հրավիրակ, արծաթել, արևմարք, խապտուտիկ, մացառուտ, հողմածեծ, տխուրաչյա, գիշերուզօր:

3. Տրված բառաշարքում ընգծի՛ր խոսակցական բառապաշարի բառերը՝ գրելով դրանց գրական համարժեքները:

Իրիկուն, հառաչանք, քառասուն, շղարշ, թուշ, խուռներամ, հռհռալ, լպրծուն, կարկառել, ականջալուր, լուռումունջ, հուռթի, մորթի, ձանկռել, ձռվողյուն, շրշյուն, մանրակրկիտ, ըմբռնել, մորթել, աչքածակ, կոտրոշ, գիժ:

4. Գրի՛ր հետևյալ բառերի հոմանիշները և փորձի՛ր օգտագործել փոքրիկ պատմության մեջ:

Անտառուտ, խռխռալ, սևեռուն, շրշյուն, շահագրգռել, ջարդել, արևառ, կրնկակոխ, ուռչել, երեկո:

5. Տրված բառաշարքից դո՛ւրս գրիր գրքային բառերը և մի քանիսը գործածի՛ր նախադասությունների մեջ:

Ես, տուն, թեպետև, նա, երևի, եղանակ, գեղեցիկ, ծով, գետ, ջուր, մայր, արևահամ, գեղեցիկ, ես, դու, հարսնատես, դյուրին, ջրահարս, կոտորակ, դահլիճ, ասղոաձաղիկ, բաժակաթերթ, հրաշագեղ, մրրիկ, լեզու, տաք, քաղցր, ասել, ուտել, գրել, քնել, խմել, սյուք, շուն, սիրտ, հող, հաց:

6. Արտագրի՛ր տրված տեքստը, թավ գրված բառերը փոխարինի՛ր համագործածական բառերով:

Լիլիթը հիացմունքով դիտում էր կարապներին՝ **ձերմակափետուր** թևերով, **սլացիկ պարանոցներով:** Եվ երբ **ծունկի իջավ՝** նրանց **փայփայելու**, հանկարծ ջրերի վրա տեսավ մի **հրաբորբ** պատկեր և հասկացավ, որ դա իր **ցոլքն** է: Եվ համոզվեց Լիլիթը, որ **կապտալուրթ** երկինքը այնքան **խորունկ** չէ, ինչքան իր աչքերը, արևն իր **հրաշեկ** բոցերով այնքան հրեղեն չէ, ինչքան իր աչքերը: Այդ պահին մի զույգ ադամանդե թևերով հակինթե թիթեռներ եկան և նստեցին նրա մազերին՝ ասես մետաքսյա թելիկներից կազմված: Լիլիթը նայեց և ժպտաց.

– Ի՜նչ լավ կլիներ, եթե սրանք միշտ **մազերիս** վրա մնային...

Եվ իսկույն քաղեց ծաղիկներ՝ **բազմերանգ**, **բազմաբույր** և **բազմաթույր**, դրեց **վարսերի** մեջ:

7. Բերված նախադասություններում գտի՛ր պատմաբառերը և դո՛ւրս գրիր (խմբային աշխատանք):

ա. Նա հագել էր պարսկական պատմուճան և երկարավուն գլխարկը գլխին, ոլորուն մաշիկները ոտներին՝ պարսիկ պիտի կարծվեր, եթե չլինեին նրա սենյակի դարանում դրված մագաղաթի ձեռագրերը և կազմերին խաչաքանդակ արծաթե, ոսկե ավետարանները ***(Դ.Դ.)***:

բ. Վարդանը մոտեցավ, հանեց սաղավարտը և չոքեց մոր մահճի մոտ ***(Դ.Դ.)***:

գ. Նա օրերով գլխից չէր վերցնում փաթթոցագլխարկը, որի պատճառով գլուխը թողնում էր կարկտահարված արտի տպավորություն ***(Հ.Խ.)***:

դ. Ձերմակ, հաստ սրնքակալները նա բռնագրավել էր իսպանացիներից, ներքինի երկար տոգան՝ հելլեններից ***(Հ.Խ.)***:

ե. Որդան կարմրագույն շապիկի վրայից հագել էր արքայական ծիրանին, գլխին դրել ոսկեճաճանչ, ատամնավոր վարսակալ խույրը, ոտքերը հագցրել երկար ձերմակափայլ սրնքազգեստներ ***(Հ.Խ.)***:

զ. Նա հագել էր զորապետի տունիկան, գլխին դրել նրա սա-

ղավարտը ու, ծիծաղը հազիվ զսպելով, ողջունում էր լեգեոնա-կաններին ***(Հ.Խ.)***:

է. Իսկ ինքը՝ Համասփյուռը, ցանկանու՞մ է արդյոք հենց վաղը ապարոշ դնել գլխին (Հ.Խ.):

ը. Իր փառահեղ գահին բազմել էր արքայից արքա Տիգրանը, նրա ձախ կողքին տիկնանց տիկին Համասփյուռն էր, աջ կողքին՝ արքայազն Արտավազդը, հետո՝ շքեղ քղամիդներ հագած չորս բդեշխներ, հազարապետ Փայլակ Մարզպետունին, արքայադուստր Նուանեն, զորապետ Մոմիկը, տակառապետ Գնունին .... (Հ.Խ.):

8. Ուշադի՛ր կարդա, սովորի՛ր պատմաբառերի ու հնաբառերի բա-ցատրությունները և դրանք տեղադրի՛ր երկսյուն աղյուսակում (զույգային աշխատանք):

Աբա (խիտ գործված բրդյա կտորից կարված տղամարդու վեր-նազգեստ), **արխալուղ** (տղամարդկանց և կանանց կարճ, մինչև ծնկները հասնող հագուստ), **երախ** (քահանայական զգեստ՝ պճե-ղավոր շապիկ), **թղլիկ** (առանց եզրերի գլխարկ, չեպչիկ, փոթիկ), **գարդմանակ** (թագավորական թագի զարդ), **դիմակալ** (սաղա-վարտի շարժական մաս, որ հագնում էին դեմքը պաշտպանե-լու համար), **զանգապան** (զինվորական պաշտպանիչ հագուստի մաս), **լանջապահ**, **լանջապան**, **լանջապանակ** (լանջը պահպա-նող զրահ՝ լանջազրահ=կրծքազրահ), **խույր** (ակնեղենով զարդար-ված գլխանոց, որ կրում էին թագավորները, բարձրաստիճան իշ-խանավորները և կրոնավորները), **ծիրանի** (ծիրանագույն անթև զգեստ, որ հագնում էին թագավորները), **մուճակ** (տնային ոտնա-ման, չուստ), **չուխա** (մահուդե նուրբ կտորից կարված երկար վե-րարկու), **պատմուճան** (թիկնոց, վերնազգեստ), **պարեգոտ** (թեթև վերնազգեստ), **ապարոշ** (գլխի փաթաթան), **օդ** (տրեխ, սանդալ, ոտնաման), **աշխարավանդ** (թագավորական թագի ժապավեն), **արտախուրակ** (խույրի կամ թագի արտաքին փաթթոց, ապարոշ), **բազպան** (թևճակ), **քղամիդ** (կրոնավորի գլխարկ), **ճոշան** (կրծքի զրահ, կրծապան, լանջապանակ), **սաղավարտ** (մետաղյա գլխա-նոց), **սրնքակալ** (սրունքները պաշտպանող հագուստ), **վարշամակ**

(թաշկինակ, գլխաշոր, սրբիչ, չարսավ, պատանք), **փակեղ** (վարշամակ, ուրար իմաստով):

Պատմաբառեր	Հնաբառեր